



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ


Գիտական, Գրագիտական, Առևեսագիտական
և Մանկավարժական



1902 ՕԳՈՍՏՈՍ 19 — ԹԻՒ 28

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:



Հայաստանի Դատարանի Գործադիր Դիմացման Կարգի ըստ 38-րդ հոդվածի

Հայաստանի Դատարանի Գործադիր Դիմացման Կարգի ըստ 38-րդ հոդվածի



Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 28

19 ՕԿՏՈՍՈՍ 1902



ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ

ՂԱԶԻ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ.

ԲԱՐԵՐԱՐ ՈՒ ՀԱՅՐԱԽՆԱԾ ԿԱՅՍԵՐ

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յաւիտեանց ցաւիտեան մեզ պարտ դրին
Մեր օրանէն մինչ ի սնար դողողոյ ծերին
Դարձ ու նախնիք մեր Ս. Դրոց ու Ս. Հարց հետ,
Յետ Աստուծոյ պաշտել, օրհնել մեր Վեհապետ:

Երկրի վրայ աստուածային Նա փոխանորդ,
Ամէն շնորհաց լոկ ինն աղբիւր առաստաղ,
Որ կը բաշխէ, որպէս արեւն իր նոյն շողեր,
Բազմամիլիոն հպատակաց իւր անձնուէր:

Երեք մեծ հին աշխարհներուն ցամաքն ու ծով
Աստղափառ քաղին կապուած սիրոյ լծով,
Հոն՝ ուր զինքն Տէր կ'ողջունէ արեւագալ,
Պատուանդանը կազմեն Գահուն աշխարհակալ:

Ինքն՝ արեւոյից արեւան հզօր ու գերազան,
Որ ուժն է միշտ բարիներուն, ուժով անմահ.
Իւր օրէնքներ՝ մեզ հաւատոյ սուրբ հանգանակ,
Ծնրադրենք անոնց առջեւ յար զոհունակ:

Նախկին բառը որ կը քոչի մեր բերանէ,
Արեւաւառ կեանքին ձօնուած ջերմ աղօթքն է:
Այն ամենուս վրայ բարձրէն տարածանի
Աստուածային մեծ Աջոյն պէս ամպհովանի:

Արեւայ, Դուք Հայր համարակաց, Հայր բարի,
Ժողովուրդդ, հլու զաւակ, միշտ Ձեզ փարի.
Դուք անոր տաք սիրեփութիւն շնորհներդ ու յորդ,
Որպէս Աստուած տայ մեր հացը հանապազորդ:

Ապա՝ որքան զեքն ու ծովը ունին կոհակ,
Որքան շունչ սփռեն հողմունք աշխարհն համակ
Այնքան առաւ ու ջերմեռանդ մեր աղօթքներ,
Գահոյքիդ ոտքն ամենօրեայ հասնին նուէր:

Տէր, դու կեցո մեր քաղաւոր
Գահուն վրայ մեծ ու հզօր.
Ու մէջ ամէն արեւներու,
Նախ աջդ անոր տուր թեւարկու:

Որպէս այսօր նոյն եւ յաւէ
Մնայ պաշտեալ մեր Վեհապէս,
Ու աշխարհի բոլոր իշխանք,
Իւր մեծ անուան տաճեն յարգանք:

Արեւուդ պէս դու փայլեցուր
Փայտեանին փառքն աւելցուր:

Թող հոմանիւ՝ կայսրներու միշտ լուսամիտ
Մնայ անունն իւր հռչակեալ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ:

Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՔԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԳՆՍՏԻԱՐԱԿԱՆԻԹԻՒՆԻՆԻ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու գործելու սովորութիւններ. ահա անոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Բ. — ԳՊՐՈՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

36. Մի՛ srsնջաք

Փոքրիկ աղջիկներ կան, որ բնաւ գոհ չեն: Զուր տեղ անոնց դաստիարակութիւն չապրտւի եւս լեցուած է իրենց համար. միշտ առիթ կը գտնեն արտնջալու անոր որոշման կամ տուած հրամաններուն դէմ:

Շարունակ՝ այն ցած ձայնով փափառքը այն կցկառուր բառերը, այն կարճ նախադասութիւններն, որով միշտ իրենց ահագնութիւնը կը յայտնեն, ահա ասոնք յարգանքի պակասութիւն, նոյն իսկ անամօրութիւն են, որուն կարելի չէ համբերել:

Փոքրիկ աղջիկներ, ամէն բանի համար եւ ամէն բանի դէմ արտնջալու սովորութիւնը մի՛ ունենաք: Ասիկա ո՛չ միայն անյարմար է, այլ եւ ծաղրելի:

Գիտէ՞ք, ինչ կը պատահի: Խրատի մը կամ կարծիքի մը դէմ որ արտնջած էիք, թերեւ վայրկեան մը յետոյ պիտի համա, կերպիք: Շատ անգամ ձեզ պատահած չէ՞ ըսել « այս դէպ է, սէտք չէր այսպէս ընել » և յետոյ գոհ էք մնացեր, որ ամէն ինչ ձեր առաջի կարծիքին հակառակ եղած է:

Դեպի ձեր դաստիարակութիւն ունեցած յարգանքն ու բարեկամութիւնը ձեզ կ'արցիլէ srsնջալի:

27. Գործակցութիւն

Երեւակայեցէք, թէ պարտեղի մը մէջ կը գտնուիք և երկու խումրի բաժնուած կը խաղաք: Եթէ ձեր խմբին մէջ գիւրաշարժ տղայ մը կը գտնուի, որ չբռնուիր, ձեզ ամբողջ խումրը կ'օգտուի անոր ճարտիկութենէն և յաղթանակը դուք կը տանիք. եթէ ընդհակառակը ձեզմէ՛ մէկը ճարտիկ է,

ահա ձեր խմբի յաջողութիւնը վտանգի ենթարկուած է:

Նոյնն է նաեւ ձեր դաստիարական աշխատութեան համար: Ձեր ընկերներէն մէկը յաջողութիւն մ'ունեցա՞ւ, ամբողջ դասարանը կը շնորհաւորեն: Եթէ մէկ ուրիշը շատախօս անկարգ է, ահա ամբողջ դասարանը նեղութիւն կը կրէ. կընայ ընդհանուր պատիժ ահմանուիլ, երբ մէկ ընկերը յիմարութիւն մ'ըրած է և հեղինակը չեն գտներ:

Ուրիշին ըրած բարի կամ չար գործին հետեանքը կրել, կը նշանակէ անոր գործակից լինիլ:

Որովհետեւ ամէնքդ գործակից էք, տե՛սէք ինչպէս անպիտան եւ անբարւ պիտի լինեիք մեկուկ չարիք պատճառելով, որ վնաս մ'ըրած չէր:

28. Ի՞նչ է բարեկամութիւնը

Փոքրիկ աղջիկներ, թերեւ աջ ու ձախ բարեկամութիւն անունը անխտիր կը գործածէք: Ամէն ընկերի այդ անունը կուտաք, և կամ այսօր մէկուն, վաղը միւսին:

Ձեզ պիտի ըսեմ. թէ ի՞նչ է բարեկամ մը և ի՞նչ է բարեկամութիւնը, և պիտի տեսնէք, թէ կարելի չէ շատ բարեկամներ ունենալ:

Ձեր բարեկամը, իմաստուն, խելացի ու լախ գուարթ տղայ մ'է, որ ձեզ պիտի քաջալերէ լինիլ բարի, լաւ խախտիլ, ձեր պարտականութիւնը կատարել: Ձեր բարեկամ անւանածն այսպէ՞ս է:

Ձեր բարեկամն այն է, որ ձեզ հետ ինտելէն հաճոյք կ'ըգայ նոյն իսկ եթէ տխուր լինիք կամ հիւանդ և մինչև իսկ եթէ չլընաք անոր հետ զրօնուի: Ձեր բարեկամ կ'ըլլա՞ր այսպէս կը վարուի՞:

Ձեր բարեկամն այն է, որ չբաշտի կամ չվախնար ձեզ զգուշացնելէ, երբ սխալ մը գործելու վրայ լինիք, կամ եթէ գործէք, ձեզ կը յանդիմանէ: Նա ձեզ կը քաջալերէ ներողութիւն խնդրելու և կ'օգնէ լաւ որոշում մը տալու: Ձեր բարեկամ անւանածն այս ամէնը կ'ընէ՞:

Ճամարիս բարեկամութիւնը երկու ալճիւրսերու միջեւ միայն գոյութիւն ունի:

29. Բարի նախանձ

Վարդուհին անցեալ օր փաղկերէն գեղեցիկ շարադրութիւն մը գրած էր և ուսուցչուհին զայն շնորհաւորեց բարձրաձայն անոր աշխատութեան և ջանասիրութեան համար:

Այն ատեն Սիրանոյշ ինքնիրեն ըսաւ, « ինչո՞ւ համար զիս ալ չշնորհաւորեն: Միայն պէտք է ջանամ աշխատիլ. Վարդուհին պէս ընել, թերեւս յաջողիմ անոր պէս՝ վարժուհիէն գովեստ ընդունիլ »:

Ահա բարի նախանձ: Կը տեսնէ՞ք, որ Սիրանոյշ չէր նախանձեր Վարդուհիի վրայ, երբեք չէր փափաքեր անոր ստանալիք գովեստները պակսեցնել կամ արգիլել, բայց կուզէր անորմէ օրինակ առնել և անոր նմանիլ:

Բարի նախանձը լաւ բան է՝ ձեր ընկերոջ յաջողութեան նկատմամբ անտարբեր մի լինիք: Մի՛ ըսէք « ինձ ինչ փոյթ » ընդհակառակը պէտք է փոյթ տանիք ձեր ընկերոջ յաջողութիւնը տեսնել: Պէտք է այն ձեզ քաջալեր լինի և անոր նմանիք, ինչ որ կ'ընէ լաւ աւակերս մը. ուրիշ մը կ'ընայ ջանասիրութեամբ անոր պէս ընել:

30. Կանոնի հնազանդիլ

Փոքրիկ աղջիկներ, այնպէս չէ՞, շատ ձանձրանալի է դպրոցի կանոնին հնազանդիլ: Մարդ կը փափաքի խօսիլ. պէտք է լռել: Կ'ուզէ խաղալ, պէտք է աշխատիլ: Կը ցանկայ կարգալ, պէտք է գրել, չաճելի է թուաբանութեան պարտականութիւնը կատարել, բայց պէտք է ասեղնագործութիւն ընել:

Ասոնք բոլորը շատ սիրտ նեղացնող բաներ են: Բայց արդեօք օգտակար է: Անշուշտ այո՛: Տեսէք ինչ կրնար պատահիլ, եթէ դպրոցի մէջ միակ կանոն մը չլինէր և թէ ամէն ոք իր ուզածն ըներ, գոյութիւն չէր ունենար ոչ դաս, ոչ կարգապահութիւն, ոչ կանոն, ոչ դիտութիւն և ոչ յառաջդիմութիւն: Քմահաճոյքը միայն պիտի կառավարէր ձեր գործերը և վարժուհին պիտի պարտաւորէր նայիլ, որ ձեզ հաճելի եղածը միայն ընէ:

Ամենայն յօժարութեամբ պէտք է կանոնի

հնազանդիլ, կանոնը դրուած է ամենուն համար առանց բացառութեան, նախառեալ ուած է ինչ որ պէտք է ընել. աշխատութիւնը յարմար կերպով բաժնուած է: Կանոններու հնազանդիլը աւակերսները կարգապահութեան կը վարժեցնէ, որուն յետոյ կեանքի մեջ պէտք պիտի ունենան:

31. Փոքրիկ նախանձ մը

Ինչո՞ւ համար Արուսեակ առանձին է պարտէզին մէկ անկիւնը, մինչպէս իր ընկերներն ուրախութեամբ կը խաղան միասին: Ինչո՞ւ համար Արուսեակ սմուգուկ կերպով կը նայի անոնց, որոնք իրմէ աւելի գեղեցիկ զգեստ մը հագած են: Ինչո՞ւ համար չսիրեր Սիրանոյշ՝ իր սեղանակից ընկերը, որ գրեթէ միշտ առաջինն է շարադրութեան մէջ:

Արուսեակ նախանձոտ է, անոր համար բնաւ բարեկամ չունի: Անոր հետ մարդ չը կրնար խաղալ, որովհետեւ կը կարծէ թէ իրեն համար անիրաւութիւն կ'ընեն խաղի մէջ. իր ընկերներուն ունեցած առարկաներուն կը ցանկայ, կը նախանձի Սիրանոյշին, որ ինչպիսի, բարի և աշխատասէր է: Ինքը կուզէ միշտ և ամէն տեղ առաջինը լինել և միշտ ամենէն նշանաւորը:

Փոքրիկ աղջիկներ, տեսէք Արուսեակի վիճակը, ինչպէս տխուր է դպրոց կ'ընած ժամանակ. տեսէք ինչպէս մէկ կողմ լքուած է: Յետոյ աւելի գէշ պիտի լինի, որովհետեւ կեանքի մէջ շարունակ պիտի պատահի իրմէ աւելի հարուստ, աւելի խելացի և աւելի կարող մարդիկներու:

Նախա՛մը արհի եւ բաւականութեան կատարեալ հիւանդութիւնն է, որ կառողջանայ շատ հաստատականութեամբ:

32. Բարի հետաքրքրութիւն

Բարի հետաքրքրութիւն մը կայ, որ ձեզի ներելի է և նոյն իսկ յանձնարարելի, այդ ձեր ուսման կը վերաբերի:

Բարի հետաքրքրութիւն մ'է՛ վարժուհիէն բացատրութիւն մը խնդրել հատուածի մը պարունակած անհասկանալի կէտի մը համար, որ պէտք է սովորիք և չէք հասկընար: Բարի հետաքրքրութիւն է, երբ կը

փափաքիք գիտնալ, օրինակի համար, ինչո՞ւ կանձրեւէ, ինչպէս կը շինեն կերպասները, ո՞վ հնարած է այս մեքենան, այն ինչ գործիքը: Խաղալով կամ գիւրութեամբ բան չը սովորի մարդ, գիտութեան համար պէտք է հետաքրքրութիւն ունենալ:

Բայց ոչ մի բան չափազանցելու է: Բարի հետաքրքրութեան տակ, դասը մի բնութեան, դասարանի լռութիւնը մի՛ խանգարէք բացատրութիւն խնդրելու այնպիսի բանի մը համար, որու վրայ այդ պահուն ոչ ոք կը խորհի: Զբօսանքի ժամին սպասեցէք կամ այն պահուն երբ վարժուհին այդ նիւթի վրայ դաս մը տայ: Պէտք չէ որ ձեռն ունամելու փափաքը դասարանին մէջ աղմուկ եւ անկարգութիւն առաջ բերէ:

ՏԻԿԻՆ, Փ. ՀԱՋԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԱԶ ՄԸՆ ԷՐ

Սիւզան տասը տարեկան սիրուն, խելացի աղջիկ մըն էր. ասեղնագործութեան մեծ յարմարութիւն ունէր. կարդալ ու գրել լաւ գիտէր եւ գծագրութիւն, անգլիերէն ու ռուսերէն սորվիլ սկսած էր: Զինքը սիրոյնով ամէնէն աւելի իր անուշ բնաւորութիւնն էր. ոչ ծոյլ ոչ ալ շատակեր աղջիկներուն կը նմանէր եւ իր մայրիկը շատ կը սիրէր:

Այս աղէկ յատկութիւններուն հետ մէկտեղ երկու գէշ սովորութիւններ ալ ունէր, որոնք եթէ չուզուէին, աղջկան մը բոլոր բարի բնաւորութիւնները անտես ընել կուտան եւ ապագային ալ մեծ վիշտերու պատճառ կ'ըլլան: Սիւզան հետաքրքիր ու անհնազանդ էր: — Սիւզան կ'ուզէր ամէն բան տեսնել, ամէն բան գիտնալ, եւ երբ մայրիկը իր փափաքը չէր կատարեր՝ կը յանդիմանէր զինքը հետաքրքիր ըլլալուն համար, Սիւզան ուզածը կատարելու համար մօրը հրամաններուն անհնազանդ կը գտնուէր. բնաւ ականջ չէր կախեր դաստիարակուհիին խրատներուն:

Սիւզանի մայրը Բարիկի մէջ Բլաս Ռուայեալ կը բնակէր, տեսակ մը թաղ որու բոլորտիքը երկաթէ վանդակով գոցուած է:

Հոն, տղաքներն կը խաղան, կը վազեն, կը ցատքուտեն առանց վախնալու այն վտանգներէն որոնք բաց ճամբաներու վրայ միշտ կը պատահին:

Զատիկը կը մօտենար. այդ միջոցին է որ համեմէ հացի մեծ պագար մը տեղի կուենայ Սէնթ Անթուան փողոցին մէջ, որ Բլաս Ռուայեալի կից է:

Թաղին տղաքները շատ ուրախ էին. պագար գացողները հետերին կը բերէին այդ աղւոր հացէն եւ իրարու կը բաժնէին: Սիւզան առաջին անգամ երբ տեսաւ այդ հացը, շատ սքանչացաւ անոր սիրուն տեսքին վրայ. ամբողջ ծածկուած էր նարնջի ծաղիկներով, նուշերով, պզտիկ շաքարեղէններով, իր կարմրուկ գոյնին մարդ չէր գիմանար: Սիւզան հարցոյց ընկերուհիին թէ ուրի՞շ տեսաւ այդ աղւոր կարկանդակը:

— Կարկանդակ չէ ասիկա, ըսաւ աղջիկը, համեմի հաց է: Բիշ մը քեզի ալ տամ, տե՛ս ինչ տղուոր է:

Սիւզան կտոր մը կերաւ եւ խիստ համով երեւցաւ իրեն:

— Իրաւ որ սքանչելի է, ըսաւ, ո՞ւրի՞շ առիթ այս հացը:

— Մեր մօտ նոր բացուած պագարէն. խառնութեան կան որ ասանկ հացէ շինուած մարդերով, կենդանիներով լեցուն են:

— Այդ ամէնն ալ հացէ՞ շինուած են:

— Հապա՛:

Սիւզանի առաջին փափաքը եղաւ երթալ տեսնել այդ աղւոր բաները. դաստիարակուհիին քով վազեց եւ խնդրեց որ զինքը պագար տանի:

— Անկարելի է, Սիւզան, մայրիկդ արգիլած է:

Սիւզան այս մերժումէն աւելի հետաքրքրուելով, սկսաւ լալ, աղաչել, բայց Օրիորդը չհամոզուեցաւ:

— Գացէք մայրիկին ըսէք որ ինքը ձեզի պագար տանի, ես չեմ կրնար անոր պատուէրին հակառակ վարուիլ:

Դաստիարակուհին՝ հնազանդութեան ընտիր օրինակ մը կուտար Սիւզանի, բայց ան մօտիկ չըրաւ. երեսները կախեց եւ հետաքրքրութիւնը յագեցնել մինալ խորհեցաւ: Գիշերը երբ պառկեցաւ, անմիջապէս քնանալու տեղ, ամէնէն գէշ բանը մտածեց:

միտքը դրաւ, յաջորդ առտին դատարան-
կուհին քովը չեղած միջոցին փախչիլ եր-
թալ պազարը տեսնել. մէկ քառորդ ժամէն
կ'երթար եւ ետ կը դառնար, անոնի որ
մէկը չէր նշմարել բացակայութիւնը: Դուք,
սիրելի ընթերցողներս, անշուշտ կ'ըսէք թէ
ասկէ աւելի գէշ բան մը չըլլար, բայց
Սիւզան ասիկա որոշելով, հանդարտեցաւ և
քունը տարաւ:

* * *

Սիւզան դատարանակուհին քովէն հե-
ռացաւ, ըսելով որ չունի պիտի ցատքէ,
դռնէն անցաւ եւ շիտակ պազարին կողմը
վազեց: Երբ հոն հասաւ, շատ յուզուած էր,
սիրտը ուժով կը բարախէր. առաջին ան-
գամն էր որ Բարիգի փողոցներուն մէջ մի-
նակը կը գտնուէր: Վախկոտ ըլլալով քիչ
մը շփոթեցաւ, քանի մը անգամ քիչ մնաց
կառքի մը տակ երթար, միշտ անցորդնե-
րուն կը զարնուէր: Խիղճը կամաց կամաց
սկսաւ խայթել զինքը. յաճախ ետին կը
դառնար եւ անցած տեղերը կը նայէր որ-
պէս զի դարձին ճամբան չկորսնցնէ: Այլ
խիղճին ճայնը պօռալ սկսաւ «Աւելի հեռուն
մի' երթար, տուն դարձիր. հետաքրքրու-
թեանդ մտիկ մի' ըներ. անհնազանդութեան
պատիժը հեռուն չէ»: Բայց այս իմաստուն
խրատները մտիկ ընող չի կար. Սիւզան կը
տեսնէ դրօշներով զարդարուած խանութներ
մեծ բազմութիւն մը փողոցներուն մէջ, կը
լսէ տղոց զուարթ աղաղակները. բաղձանքն
ու հետաքրքրութիւնը խիղճը կը լռեցնեն:

Ահա կը հասնի պազարին ամենէն խիտ
տեղը. ամէն կողմ կարկանդակներէ, հա-
մեմեալ հացերէ շինուած մարդեր, ձիաւոր-
ներ, հազարումէկ տեսակ զուարճալի առար-
կաներ, իրենց տեսքովն ու հոտովը բերնին
ջուրերը կը վազցնէին: Սիւզան կը մտածէ
որ տեսնելէ ետքը համը նայիլ պէտք է:
Գանձանակը հետը առնելու չէր մոռցած.
մայրիկը հոն արծաթ դրամ մը կը ձգէր,
ամէն անգամ որ աղջիկը խելօք ըլլար. ա-
նանկ որ հիմայ գրեթէ բոլորովին լեցուցած
էր այդ խոշոր տուփը: Բայց դժուարը մէ-
ջէն քիչ մը դրամ հանելն էր: Չար աղջիկը
ամէն կողմ դարձուց գանձանակը, շարժեց,
ցնցեց, բայց անօգուտ տեղը:

Սիւզան բոլորովին յուսախաբ, գանձա-

նակը ձեռքին մէջ առդին տնդին դարձու-
ցած ժամանակ, երկու գէշ աղաքներ իրեն
մօտեցան. մին ուժով մը հրեց աղջիկը, միւսն
ալ գանձանակը յախշտակեց եւ երկուքը
մէկտեղ փախան:

Սիւզան այս յանդուգն գողութենէն բո-
լորովին սարսափած սկսաւ լալ և յն ատեն
պառաւ կին մը, որ աղջկան մինակ ըլլալը
դիտած էր, անոր մօտեցաւ և հարցուց թէ
ինչո՞ւ կուլայ:

— Գանձանակի գողցան, ըսաւ Սիւզան:

— Եկուր, հրեշտակա, քեզի ուրիշ մը տամ:

Սիւզան չէր գիտեր թէ անձանթ մէկու
մը վստահիլը գէշ բան է. կնկան ետեւէն
գնաց մինչեւ մութ փողոց մը, ուր ջատուկը
աղջկան օղերը յախշտակելով աներեւոյթ
եղաւ: Սիւզան ուզեց պօռալ, կանչել,
բայց մարդ չկար. այն ատեն սիրտը լեցուե-
ցաւ, խոշոր արտասուքներ այտերէն վար
կը հոսէին: Ի՞նչպէս պատժուած էր անհնա-
զանդութեանը համար, Բայց իր տառա-
պանքները դեռ չէն վերջացած: Նեղ փողո-
ցէն դուրս կ'ելլէ եւ կ'ուզէ տուն դառնալ:
Անձրեւը կ'առնէ. ի՞նչ ընել. կ'սկսի չիփ շի-
տակ վազել. յուսալով որ քանի մը վայր-
կեանէն դատարանակուհին կը գտնէ. դժ-
բաղդարար ճամբան կը սխալի եւ մօտիկը
տարածուող վէնսանի անտառներուն ճամ-
բան կը բռնէ: Հագուստները թրջած են
անձրեւէն, չըջագգետը միտին կը փակչի:
Սիւզան միշտ կը վազէ, խելացնոր, ցուր-
տէն դողալով, առանց գիտնալու թէ ո՞ւր
կ'երթայ:

Վերջապէս ինքզինքը դաշտին մէջ կը
գտնայ, գիշերը հասած է. հազիւ քանի մը
անցորդներ կ'երեւին, որոնց Սիւզան չհա-
մարձակիր ճամբան հարցնել, վախնալով որ
թափառաշրջիկ տեղ դնելով գինքը բանտ
կը տանին: Ծաւի մը տակ կը նստի հեծ-
կըլտալով, վախէն, յուսահատութենէն և
ցուրտէն վրան ջերմ կուգայ. ի՞նչպէս պի-
տի անցնէ գիշերը բաց օդին, դայելու
զազաններու մօտ: Այլ չդիմանար, զառան-
ցել կ'սկսի, ամէն վայրկեան գիշատիչ գա-
զաններ տեսնել կը կարծէ որոնք կուգան
զինքը լափելու, գողերը վրայ կը հասնին...
Եւ կը մարի կ'իյնայ...

* * *

Առաջին փամբ 12-ի ատեններն է, արեւոյ ճառագայթ մը Բնա Ռուսայեարի մէջ տան մը պատուհանէն ներս կը թափանցէ, եւ քնացած սիրուն աղջկան մը արծաթ մազերը կը փայլեցնէ. աղջկան գլխէն գիշերուան գտակը ինկած է՝ թեւերը առիւն անոյ դին կը շարժէ խեղդուկ ձայներ հանելով. կցըրծքը սեղմուած է եւ ջղուտ շարժումներ բոլոր մարմինը կը ցնցեն:

Այս աղջիկը Սիւզանն է: Աչքերը խոշոր խոշոր կը բանայ եւ չորս գին կը նայի. մերը տունը իր սենեակին յովէն է: Տեսածը երազ մըն էր:

Ուրախութեան աղաղակ մը կը թռի իր բերնէն: Մայրը լսելով զաւկին ձայնը քովը կը վազէ: Սիւզան անոր վիպը կը պըլուրի:

— Ո՛հ, մայրիկ, կը գոչէ, ալ բնաւ անհնազանդ ու հեծաքըքի չպիտի ըլլամ:

Թարգմ. ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐՆԵՆ



ՊԱՏՄԱԹԻԻՆԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՐԵՆ

Սիւտէյ-Սիթիի խորհրդականները, կարեւոր գումարումի մը ներկայ գտնուելու համար ահապարանքով կը հասնէին:

Սիւտէյ-Սիթիի Հնդկաստանի ամէնէն հանդադրա քաղաքներէն մին է, Գանդէսի վրայ շինուած է եւ Կորիզանքարի անտառները քանդելի հովանի մը կը ձեւայնեն անոր շուրջը:

Տիար խորհրդականները իրար անցած էին. Ի՞նչ կար արդեօք, Ի՞նչ կարեւոր դէպք մը տեղի ունեցեր էր: Ամէնքն ալ իրարու երես կը նայէին լուռ ու մունջ կ'սպասէին. մէկը բան մըն ալ չէր գիտեր:

Ձանգակը զարնուեցաւ, վերջապէս... խնդիրը պիտի պարզուէր. ամէնքն ալ նախագահին, Ռաճարուրի կողմը ուղղեցին ակնարկներն: Խեղճ Ռաճարուր, ինչպէս ալ քայնը նկատէր էր, աչքերը մթնցեր էին, հպկատի կնճռոտներ, Տարտամ ակնարկ մը նկատեց ժողովին մէջ եւ դամբաճային ձայնով մը սկսաւ:

«Տեսաք խորհրդականք, մեր հայրերը իրաւամբ...»

Նախագահը ճարտարախօս մէկն էր, բայց

չաղակրամելու ատենը աղէկ չէր որոշեր: որովհետեւ բոլոր ներկաները «խնդիրը պարզէ» կը պոռային:

Աղէկ, ըսաւ ճարահատ ատենաբանը: Գիտէք որ այս դաւառին կառավարիչը առաջին անգամն է որ մեր Սիւտէյ-Սիթի քաղաքը իր այցելութեամբ պիտի պատուէ: Մեր կարծիքով ամէն բան սպառնալու է, ետէն բան կարգի դրած էինք: Որո՞ւ մը աչքէն կ'անցնէր որ նորին Վսեմութիւնը ասանկ փափաք մը կրնայ ունենալ եղեր... տեսէ՛ք...:

Եւ կառավարիչին հեռագիրը ժողովականներուն շրջանը բրաւ: Ամէնքն ստրաւափահար կը կարդային. «Վաղը առաւօտ պիտի ներկայ ըլլամ Խորհրդին...»: Սոսկեմբ:

Սիւտէյ-Սիթիի աշխարհիւ ամէնէն աղւոր քաղաքն է բայց եկուր տես որ հարկւրաւոր տարիներէ ի վեր արջ մը երեւցած չէ հոն: Սիւտէյ-Սիթիի շրջակայքը արջ մը փնտռելը՝ Լոնտոնի մէջ մամուլ մը գտնուելու պէս բան մըն է:

Խնդիրը շատ ու շատ կողմեր դարձուցին. բայց մէջէն ելլելու հնարք մը չկրցան գտնել: Վերջապէս խորհրդականներէն մէկը ներշնչուած ի պէս ոտքի ցատքեց ու խոստացաւ յաջորդ օրը ինք արջ մը պիտի գտնէ՝ նորին վսեմութեան որսին համար: Իւրաքանչիւր անդամ՝ Խորհրդիին վստահութիւնը կը վայելէ, ուստի մեր ժողովականներն ալ խնդիրը լուծած ըլլալու գոհունակութեամբ ժողովն ալ լուծեցին:

* *

Յաջորդ օրը բոլոր խորհրդականները նախագահին շուրջը հաւաքուած՝ որսի ժամադրաւայրը կ'սպասէին: Կառավարիչը չուշացաւ գալու, մինակ էր. ոտքէն մինչեւ գլուխը որսի համար պինուած էր: Սիւտէյ-Սիթիի ժողովականները զարմացումով իրար կը նայէին, որովհետեւ խաղաղապէս մարդիկը զէնքին ինչ օգտու ունենալը չէին գիտեր: Բայց եւ այնպէս չվարանցան նորին Վսեմութեան առջեւ վազելու և անոր բարի դալուստ մաղթելու:

Ներկայացումներէ հաքք քիչ մը ատեն հազիւ անցած էր երբ մունջիւն մը անտառը

դերդեց. խորհրդականները սոսկալով իրա-
յու նայեցան:

Արջ մը ծառերու մէջէն դուրս ելաւ: Պարոն կառավարիչին գոյնը նեաեց բայց զգալի չըրաւ: Խորհրդականներն ու նախագահը մէյմէկ ծառի ետեւ պահուրտեցան: Արջը կանգ առաւ, չորս կողմը սկսաւ դիտել ապուշ ապուշ. ետեւի թաթերուն վրայ նստաւ և... կռակի վրայ խոտերուն մէջ պառկեցաւ:

— Թշուառակա՛ն, գոչեց կառարարիչը, պառկող արջէն աւելի վտանգաւոր կենդանի չկայ:

Յանկարծ երկայն սոյլ մը թնտացուց օդը:
— Ի՛նչ կ'ընէք, գոչեց Նորին Վսեմութիւնը, հիմայ կենդանին եթէ արթնայ, սարսափելի կերպով կատղած պիտի ըլլայ:

Իրա՛ւ ալ, արջը ոտքի ցատքեց, սկսաւ անդին ասդին վազվառել:

— Ես ձեզի չըսի, կ'ըսէր կառավարիչին մարած ձայնը:

Բայց կամաց կամաց հանդարտեցաւ. սկսաւ ինքնիր վրայ դառնալ, խոնարհութիւններ ընել, բարեւներ տալ, ծափ գարնել:

— Թշուառակա՛ն, ըսաւ կամաց մը Ռաճարուր, գիտուն արջի մը կը նմանի կոր:

— Մ'ստ, ըրաւ աւելի օր արջ մը գտնել խոստացող ժողովականը: Պարնըմի կենդանիներու խումբը քանի՞ մը օր է Սիսնէյ-Սիթի կը գտնուէր, գացի արջը առի...:

Բայց պարոն կառավարիչին մտքէն չէր անցնէր թէ դիմացինը դառազեղի մէջ կըլթուած արջ մըն է. հապա կենդանիին բոլոր շարժումները անոր կատաղութեան կը վերագրէր: Հրացանը ուսին դրաւ և կրակեց. արջը հանդարտօրէն ասդին նայեցաւ և սկսաւ դէպի կառավարիչը քալել. երկրորդ հրացանի հարուած մը պարապը գնաց. արջը անմիջապէս խոտին վրայ երկնցաւ: Ներկայացումներու միջոցին խաղացած ատենը այսպէս կը վարուէր:

Նորին Վսեմութիւնը կարծեց թէ կենդանիին գործը լմնցել է. հրացանը մէկ կողմ ձգեց և դանակը քաշելով վրան գնաց:

Արջը կարծելով թէ առաջին դերը լըմնցել է, ոտքի ելաւ երկրորդին սկսելու համար և դէմ դիմաց եկաւ յաղթական որսորդին հետ:


Իմաստուն կենդանին՝ պարոն կառավարիչին մէջքէն թեթեւ մը բռնեց և քաշեց տարաւ վախի մը պտոյտքներու մէջ: Նորին Վսեմութիւնը սոսկումէն ինքզինքը կորսնցուցած էր, չորս աղմուկներ երբեմն երբեմն կոկորդէն դուրս կը փախչէին: Արջը զայն հանդարտեցնելու համար խոշոր լեզուովը երեսը կը լիզէր առանց պարելէ դադրելու:

Իրաւ որ Տիար խորհրդականները չէին ձանձրանար ծառերուն ետեւը պահուրտած տեղերնուն: Պարոն կառավարիչը ասանկ կալանքաբերի մը չէր սպասէր, ինկաւ մարեցաւ:

* *

Նորին Վսեմութիւնը Հնգկաստանի մէջ ըրած զննութեան տեղեկագրին 237րդ էջին մէջ կը կարդանք: «Սիսնէյ-Սիթի շըլլապատուած է խաւարակուռ անտառներով որու մէջ վայրի գաղաններ կը վիտան: Ես անձամբ արջ մը որսացի հոն: Կենդանին սովորականէն շատ աւելի մեծ հասակ մը ունէր, երկու անգամ կրակ ըրի վրան և ըստացած վերքերուն հակառակ՝ երբ վերջին հարուած մը տալու համար մօտը կ'երթայի վրաս յարձակեցաւ: Բոլոր պաղարիւնութիւնս ու արթնամտութիւնս հազիւ ազատեց զիս վտանգէն: Կենդանիին ուղի բռնեցինք և Պարնըմի նուիրեցինք: Այսօր դայն տեսնողը բնաւ չմտածէր թէ անտառին մէջ վայրի կեանք մը ունեցած է ան: Անանկ աղուոր կը պառկի, կ'ելլէ, կը պարէ որ տեսնողին զարմանքը կը չարժի»:

Թարգմ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐՅԱՆ



Ս. ՄԱՐԿՈՍԻ ԶԱՆԳԱԿՍՈՒՆԸ

Ամէն անոնք որ սէր ու հիացում կը տածեն անցեալէն մնացած ալեւոր բաներուն, սուգ մը կրելու չափ մեծ ցաւ դգացին Վենետիկի Ս. Մարկոս եկեղեցիին Զանգակատան կործանումը իմանալով: Հապա վենետիկցիներուն զգացած կսկիծն ու մորմնքը չափ ու սահման չունի, որովհետեւ այդ հրնաւանդ շէնքը, որ էյֆէլի աշտարակէն շառաջ աշխարհիս ամենէն բարձր շէնքն ըլ-

լալու փառքն ունէր, 'ինքնին ներկայացուցած հնարանական անհաշուելի արժէքէն զատ Աղբիականի Դշխոյին քաղաքացիներուն ամբողջ կեանքին ականատես, ամէն ուրախութիւններուն եւ ցաւերուն մասնակից եղած էր:

Այս արուեստական առարկային հիմնար-

դանուի Տօժերու (դուքսերու) ապարանքը՝ որ աշխարհիս ամէնէն մեծաքանչ թանգարանը կը փախէ իր պատերուն մէջ: Մարմարեայ պալատներու, երփներանգ կիտուածանկարներու հաճութարան հրապարակին արեւելեան կողմը այդ վեհ դիտարանը պչրող էակ մը կը բարձրանար որու գլուխը



կութիւնը սկսաւ 885 ին եւ միայն 1329 ին աւարտեցաւ, որովհետեւ նախկին ճարտարապետը՝ չէնքին հիմերը ձգել ու բաւական գործը յառաջ տանելէն յետոյ չվստահելով իր ծրագրին վրայ փախած էր:

Մեր պատկերին մէջ զանգակատունը նկարուած է Լա Բիաճէթայէն. ալ կողմն է Ս. Մարկոսի եկեղեցին, իսկ ձախ կողմը կը

զարդարող հրեշտակը, ամպերուն մէջէն լոյս եւ օրհնութիւն, փայլ ու ճաճանչ կը սփռէր Աղբիականի Թագուհին զաւակներուն վրայ:

Յուլիս 14ի առաւօտուն տեղի ունեցած այդ փլզումին իբր պատճառ կը համարուին կայծակի կրկնակ հարուածները որոնք մեծ ճեղք մը բացած էին չէնքին վերէն ի վար: Վերջերս այդ ճեղքերը տեղի ունեցող ան-

դադրում՝ պզտիկ երկրաշարժներէն աւելի բացուելով հասցուցած էին Զանգակատունը իր հոգեվարքի վիճակին: Հիւանդութիւնը ճանչցուած եւ մահը կանխատեսուած էր: այնպէս որ հնադարեան հսկան իր անկումին մէջ եւ ոչ մէկու մը սուգին պատճառ եղաւ, մինչեւ անգամ խնայելով իր ոտքերու տակ փթթող եկեղեցիին ու ապարանքին. կքեցաւ ինքն իր վրայ, ինչպէս ալեգարդ ծերունի մը պիտի ջոքէր իր ծունգերուն վըրայ երբ ոյժը սպառէր:

Քաղաքապետական ժողովն ու ազնուականները Խորհրդարանին մէջ նիստ դուրսարած էին վերջին ներքող մը, Կամբանական մը խօսելու եւ յետին արցունքի չիթ մը կաթեցնելու սիրեցեալ բարեկամին մահուան վրայ երբ Մարգարիտա Մայր Թագուհիէն սոյն հեռագիրը հասաւ.

«Գեղարուեստական մեծ դժբաղդութիւնը որ այդ քաղաքին ժողովուրդը դառնապէս խոցեց՝ իմ սիրտս ալ մեծապէս ցաւցուց. նորոգ կրած յուզումներու մէջ չեմ կրնար մտաբերել Վենետիկի գիւղանկարին ուրուագիծը առանց անոր զանգակատան, եւ Ս. Մարկոսի հրաշալիքները առանց Սանտովինոյի Լոճէթային: Վենետիկի վիշտին պիտի մասնակցին նաեւ այն ամէն անհատները որոնք գեղարուեստի ճանաչողութիւն ունին եւ այն հոյակապ յիշատակարանին փառաւոր պատմութեանը յարգանք կը տածեն: Շնորհակալ եմ ձեզ որ այդ դառնութեան վայրկեաններու մէջ մտածեր էք զիս եւ հեռագրեր, «անշուշտ» առհաստաչեայ մըն է այդ իմ սքանչանքիս եւ մեծ համակրանքիս որ ունիմ Վենետիկ քաղաքին վրայ»:

Ժողովը որոշեց որ նորէն կանգնուի այդ աշտարակը, եւ փաստուած չէնքերն ալ նորոգուին: Անմիջական հանգանակութիւնով մը մէկ միլիոն Ֆրանք ժողովուեցաւ, նոյնչափ մըն ալ ժողովուրդէն հաւաքելով դիւրաւ պիտի գոցուին շինութեան ծախսերը:



Հանրագիտակի 28րդ թիւն հրատարակելու առթիւ՝ կը խնդրենք մեր Մեծ. Բաժանորդներէն՝ որոնք զեռ չեն վճարած, բարեհաճին վճարել: Նոյնպէս կը խնդրենք մեր Մեծ. Կործակալներէ որ չնորհ ընեն հաշիւները կարգադրելու:

Փ Ո Ւ Ր Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԿԻՋԲԷՆ ՄԻՆՉՈՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Փ Ս Ի Ն

ԳԼՈՒԽ Ը.

ՅՈՒՆԱՍՏԱՆ. — ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

(Շաբ. 19րդ թիւէն)

Դժոխաց աստուածունի կոչուած Կատաղունները տղոց կամ մեռած մարդոց կը փաթթուէին, եւ անոնց յանցանաց համեմատ կը չարչարէին: Այս աստուածունիները կերպով մը խղճմանքի կամ խղճի խայթի ներկայացումները, մարմնացումն էին. շատ ու շատ խորհրդաւոր տեսակէտներով կարեւոր էին: Իբրեւ բարոյականի նուիրադործում, այս կրօնքն ապաւնի կեանքին նկատմամբ գրեթէ որոշ բան մը չէր ըսեր: Անշուշտ յանցապարտներու համար նախաազմանուած էին դժոխքին մէջ սպասող չարչարանքներ կամ պատիժներ, եւ արդարները վարձատրուած էին Եղիսեան դրախտավայր դաշտերուն մէջ, որ իրենց վարձատրութիւնը կը սեպուէր:

Աստուածները կ'սղոքուէին, այսինքն անոնց բարկութիւնը կ'անցնէր նուէրներով եւ աղօթքներով: Տաճարի դուռը՝ կրօնականը կամ քուրմը կը սրսկէր նուիրական ջուրը (ճիշդ քրիստոնէական արդի օրհեալ ջուրին նման) ներկայից կամ հաւատացելոց ձեռքերուն ու գլուխներուն վրայ: Միշտ դուրսը կատարուած զոհադուրութիւնները նուիրական ընթրիք մըն էին:

Տաճարին կեդրոնը կը բարձրանար աստուածին արձանը: Անոր պատերն ի վար կը կախէին սրբազան նուէրները, եւ յաճախ անյուսալի հիւանդութենէ մը քփչուած լինելուն համար իբր երախտագիտութիւն, ուխտ ըլլած բնօրէններ: Դիւցանչաբանները կամ մարտնչներն ալ կը պաշտէին: Ողիմպեան գաւառին մէջ Պեղոպսի ուսը կամ ուսուսկը հիւանդները կ'ընտանէր, Դէկէի մէջ՝

Որեստի ոսկորտիքը քաղաքին փրկութիւնը կ'ապահովէր։ Տաճարները ապաստարանի տեղ կը ծառայէին. այսինքն՝ այն յանցաւորները որ փախչելով իրոյնց հալածչաց ձեռքէն այս կամ այն տաճարները ապաստանէին կ'ազատուէին իրենց կրկնիք պատիժէն։ Եղան ատեններ ալ ուր ժողովուրդները ամբողջ նշովուեցան, անիծուեցան, այսինքն նուիրական սուրբ տեղեաց հետ առնչութիւն ունենալու իրաւունքէն զրկուեցան։ Եթէ հելլենական աստուածները նալաստեցին իրենց հաւատացելոց զարգացմանն ու բարգաւաճումին համար, ա'լ աւելի առաջացուցին արուեստն ու բանաստեղծութիւնը։ Եսքիզէսի թատերգութիւնները՝ կրօնական գուաներգութիւններ էին, և Փիթիաս աստուածոց արձանները քանդակագործելով՝ մարդկային գեղեցկութեան ամէնէ աւելի չքնադադոյն ձեւերը կամ կերպարանքները կը գտնէր։

ԳԻՈՒԽ Թ.

ԼԻԿՈՒՐԳՈՍ ՈՒ ՍՈՂՈՆ

Սպարտա Լիկուրգոսէ առաջ. — Սպարտա թէեւ Լիկուրգոսէն առաջ երկու դարու չափ գոյութիւն մը ունեցաւ, սակայն պատմութեան մէջ յիշատակութեան արժանի գործերէ գրեթէ բոլորովին զուրկ է իր այդ գոյութիւն։ Դորիացիք երբ 1004ին Հերակլեանց կամ Հերքիւլէսի տղուն առաջնորդութեամբ Պելոպոնէս յարձակելով գրաւեցին Լակոնիան, որուն հելլենացեղ ժողովուրդը այս աշխարհակալութեան երեսէն թէեւ աշխարհի ծանօթ այլ եւ այլ կողմերը ցրուեցան և ծանօթ մեծամեծ գաղթականութիւնները հաստատուեցան, սակայն մնացին ալ Լակոնիայի մէջ բազմութիւ ժողովուրդ որ չգաղթեց։ Ուստի Հերակլեանք կամ Դորիացիք պարտաւորուած էին մնալ զէնքի տակ իբրեւ զօրախումբ մը թշնամի երկրին մէջ բանակ դրած։ Սպարտաի շուրջն հաստատելով իրենց կեդրոնն՝ իրենք (Դորիացիք) եղան երկրին տէրն ու կազմեցին Պետութիւնը, իրենց գերիշխանութեան տակ հպատակեցուցին, քաղաքներուն մէջ, Լակեդեմոնացիներն՝ որոնք կը

վայելէին քաղաքացիական բոլոր իրաւունքները, և գիւղերուն մէջ՝ Իօդները, որոնք գերիներն եղան Սպարտաի նորեկ աշխարհակալաց՝ իրենց կենաց, ստացուածոց և իրենց ընկած երկրին ու մշակած հողերուն հետ։ Ինչ որ էին Բարիաները Պրահմական Հնդկաստանի մէջ, նոյնն էին նաեւ Իլոդները Պելոպոնէսի մէջ։ Սպարտացիներն իրենց մէջ հաւատարմապատիւ էին, սակայն այս նախնական կամ նահապետական հաւատարկանութիւնը տակաւ առ տակաւ ընդհատուեցաւ կամ ձեւափոխուեցաւ այն պատճառաւ որ այլ եւ այլ իշխանական ընտանիքներ հետզհետէ երկրին իշխանութիւնը ձեռքէ ձեռք խլեցին, և իրենց գիտցածին պէս վարեցին երկիրն ու ժողովուրդը։

Դորիացեղ տիրապետական ցեղերու այս այլ և այլ ելեւէջներուն հետեւանօք իրեն հպատակ քաղաքներուն կամ ժողովրդոց մէջ խռովն ու վրդովն ընդ միշտ անսրակառէ զան, և երկրէն դուրս, հանդէպ ուրիշ իշխանական ցեղերու, իրենց քաղաքական ազդեցութիւնը տկարացաւ։ Երկրին կամ Դորիացեղ իշխանական այս կազմալուծման ատեն կը հասնի Լիկուրգոս, և իր օրէնսդրական հանձարեղ կարգադրութեամբ թէ Սպարտացեղ քաղաքական կանխահաւ անհկումին ու ապականումին առաջը կ'առնու։

Լիկուրգոս. — Սոյն օրէնսդիրն՝ որ իր ատենի Սպարտացեղ տիրող Պողևտէտիկոս թագաւորին եղբայրն էր, յաջողեցաւ, Դելբեան մեհեանին Պիւթեան հարցուկին մէկ նպատաւաւ պատգամէն ուժ առած, ընդունել տալ իր քաղաքական բարենորոգումները։

Լիկուրգոսի քաղաքական այս հաշտարար և իմաստուն բարենորոգմանց շնորհիւ, նորէն հաստատուն ու տեսական կը մնային երկու իշխանական ցեղերու մէջ բաժնուած տիրապետութիւնը։ Ծերտիոյտն ու հանրային ընդհանուր ժողովրդաժողովը, որք կըրօնքին ալ իպետերն էին, իրենք երկուքին կը վարէին նաեւ բանակաց կամ զօրաց հրամանատարութիւնը և կը հսկէին օրինական կամ քաղաքական այն վճիռներուն գործադրութեանը, զոր կը բանաձեւէին կամ կ'որոշէին ծերտիտականներն և անոնց արդար ու ընդհանուր օրինաց համաձայն լինելը կ'ընդունէին Ընդհ. ժողովոյ ան-

դամները: Բոլոր քաղաքացւոց մէջ հաւասարութիւնն հաստատելու համար երկրին հողերը բաժնեց 30,000 մասերու, անոնցմէ 30,000 մարդաբաժին կամ ընտանեբաժինները Լակեդեմոնացւոց համար, մնացած 9,000 բաժիններն ալ Սպարտացւոց համար:

Այս վերջինները ստացան մասնաբաժին եղած Լակեդեմոնիայի ամենէ աւելի արգասաւոր հողաբաժինը, զոր հերկել, ցանել, քաղել, մշակել պարտաւոր էին իւրեքները Սպարտացւոց համար: Այս հողաբաժինները անփոխանցելի էին. այսինքն ստացուածատէրերը չէին կրնար ձեռքէ հանել կամ ծախել ու է կարօտութեան պատճառաւ: Բայց որովհետեւ անդադար մղուած պատերազմներուն երեսէն Սպարտացւոց թիւը նուազեցաւ, շատ մը հողաբաժիններ անտէր մնալով իրարու միացան և հողային բաժանումներն իրենց հաւասարութիւնը կորսնցուցին: Լակեդեմոնացիներն՝ ընդհակառակն իրաւունք ունենալով օտարականաց հետ ամուսնանալ կարենալու, իրենց թիւն հետզհետէ աճեցաւ, իրենց ստացուածքներն ալ նուազեցան և եկաւ ժամանակ մը՝ ուր Լակեդեմոնիայի մէջ հարուստներուն թիւը քիչցաւ ու շատցան աղքատ ընտանեւերն երկրին մէջ, և անմխիթարելի ու աննախանձելի դարձուցին Սպարտայի վերջին օրերը:

(Շարունակելի)



Գ Ի Տ Ս Ա Ս Ն Վ Է Պ

Փ Ի Ի Ա Վ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 27րդ թիւէն)

Վերջապէս հասանք անանկ տեղ մը ուր ծովափը նեղնալով ջուրերը կուգային գրեթէ կրանիթէ պատերուն ոտքերը թրջելու:

Այս հսկայ պատին մէջ մութ նրբանգը մը կը բացուէր և մուտքին ճախտը քարին մէջ կը տեսնուէր:

Ա. Ս.

«Ա. Ս. Արն Սաքնիւսէմ, դոչեց հօրեղբայրս, միշտ Արն Սաքնիւսէմ»:

Խ.

Սոյն ուղեւորութեան սկիզբէն ի վեր շատ վարմանալի բաներ տեսայ, բայց կըրնամ ըսել թէ ժայռին մէջ քանդակուած այս երկու գիրերը զիս ամէնէն աւելի ապշեցուցած էին: Չէ թէ մինակ գիրերը կը տեսնէի, հապա զանոնք փորագրող գործիքը ձեռքերուս մէջ էր: Կասկած չկար որ մենէ առաջ ուրիշ մը փորձած էր միւսնոյն ճամբորդութիւնը և մեր գտնուած տեղը հասած:

Առանց ժամանակ կորսնցնելու ետ դարձանք և ելեքտրական լապտերնիս և ուրիշ գործիքներ աւելնելով եկանք լաւ մը զննելու այդ ներքնադիւն: Ասիկա՝ կարծր ժայռին մէջ փորուած 5 ոտք տրամագծով կլոր խողովակի պէս բան մըն էր, գետինէն շատ բարձր չըլլալուն դիւրաւ կրցանք մէջը մըտնել: Հազիւ տասը քայլ առած էինք ճամբանիս կտրեցաւ, գիմացնիս պատ մը կը բարձրանար: Աջ կողմին նայեցայ, ճախին նայեցայ, աակէն փորձեցի, և ոչ մէկ կողմէն անցք մը կար:

— Չէ, գոչեցի գրգռուած ծայնով մը, չէ՛, Սաքնիւսէմի ասկէ անցած ժամանակը, այս ժայռը հոս չէր, ճամբան բաց էր, ետքէն, մագնիսական կոմ հրաբխային պատճառներով հսկայ փակոցը ինկեր գոցեր է ուղին: Պատահական արգելք մըն է աս և ոչ ուրիշ բան, և եթէ չկարենանք դայն վերցնել՝ Երկրիս կեդրոնը հասնելու անարժան պիտի ըլլանք:

Այս խօսքերը ըսած ժամանակ՝ հօրեղբորս հողին իմ մէջն էր անցեր կարծես. անցեալը մոռցեր էի և ապագան հոգ չէի ընել: Երկրագունդիս վրայ ալ ինծի համար բան մը գոյութիւն չունէր, ո՛չ քաղաքները, ո՛չ դաշտերը, ո՛չ, ո՛չ Քէօնիկիթըսս, ո՛չ իսկ Կրաիւպէնը:

— Լա՛ւ, ըսաւ հօրեղբայրս, բրիչով կոտորտելու է:

— Շա՛տ դժուար կ'ըլլայ, պատասխանեցի. վառօդ ունինք հետերնիս, անով վերջրենք այս քարի կտորը:


Հանա արդէն եկեր մեզի միացելու էր, չուտով մը ետ դարձաւ և պէտք եղած գործիներն ու վառօդը բերաւ:

ԽԱ.

Յաջորդ օրը, օգոստոս 27, հինգշաբթի, նշանաւոր օր մը եղաւ մեր այս ստորերկրը-եայ ճամբորդութեան համար:

Ժամը 12ին ամէնքս ելեւ ինք:

Խնդրեցի որ պատրոյգին կրակ տալու պատիւը ինծի թողուն. Այս գործողութիւ-



Որսորդը սկսաւ ժայռին մէջ ծակ մը պեղել իսկ հօրեղբայրս ու ես երկար պատրոյգ մը շինելու զբաղած էինք:

Կէս գիշեր եղեր էր արդէն, վառօդը բացուած ծակին մէջ լեցուցինք, և պատրոյգը դրինք:

— Երթանք հանգչինք ըսաւ, հօրեղբայրս:

Նը կատարելէս անմիջապէս ետքը պիտի երթայի լաստին վրայ ընկերներուս միանալու և եզերքէն հեռանալով դէպի ծովուն բացերը պիտի երթայինք: Պատրոյգը 10 վայրկեանի չափ պիտի այրէր և այսքան ժամանակը բաւական էր ինքզինքնիս ասպհով տեղ մը դնելու:

Թեթեւ նախաճաշէ մը ետքը հօրեղ-

բայրս ու Հանս լաստը ելան, ուր արդէն տեղաւորուած էին բոլոր կարասիներն իսկ:

— Գնա՛, տղաս, ապսպրեց հօրեղբայրս բայց չուտով ետ դարձիր:

— Հանգիստ եղի՛ք, հօրեղբայր:

Գետնուղիին մէջը հասայ, լապտերս բացի և պատրոյգը բռնկեցուցի: Յետոյ շուտ մը լաստը մտայ ու եղերքէն բաւական հեռացանք: Հօրեղբայրս, ժամացոյցը ձեռքը վայրկեանները կը համբէր. «Տակաւին հինգ վայրկեան, չորս... երեք... երկու... մէկ... փլէ՛ք լեռներ»:

Ի՞նչ տեղի ունեցաւ: Պայթումին աղմուկը չիմացայ, բայց ժայռերուն տեսքը փոխուեցաւ յանկարծ աչքերուս առջեւ: Կրանիթը բացուեցաւ վարագոյրի մը պէս և կրցայ նշմարել անշտփելի անդունդ մը որ կը բացուէր ցամաքին մէջ իսկ: Ծովը ահագին ալիք մը ձեւացուց՝ որովհետեւ կոնակը կը բարձրանայինք ուղղաձիգ: Երեքս ալ տապալեցանք, վայրկեան մը կարծեցի թէ գահավէժի մը մէջ կը գլորինք: Բայց այնպէս չէր: Հակառակ մութին, շէնկոյցին, զգացած սարսափիս, հասկցայ անցած դարձածը: Ծամբանիս կտրող ժայռին ետեւը ահագին անդունդ մը ըլլալու էր: պայթումին ցնցումէն զետիներ ձեղքուելով ծովուն ջուրը դէպի հոն կը խռժէր, մեզի ալ միասին տանելով:

Ամէն բան լմնցած կարծեցի:

Ժամ մը, երկու ժամ, ի՞նչ գիտնամ, անցան: Երեքս, արմուկ արմուկի սեղմելով անշուշտ կը մնայինք: Կրցածնուս չափ ու ժով լատտին կառչելով, որովհետեւ շատ արագ կը յառաջանայինք և եթէ վայրկեան մը տկարանայինք ալիքներուն մէջ կորսուած էինք:

Հանս ինքզինքը ժողովելով, կարող եղաւ վերջապէս ելեքտրական լապտերներուն մին վառել: Անոր դողդոջ լոյսով կրցանք քիչ մը չորս կողմերն իս դիտել: Բաւական լայն գետնուղիի մը մէջ էինք, լաստը գտնուելով կը յառաջանար՝ գրեթէ ժամը 30 մղոն արագութեամբ մը:

Ժամերը կ'անցնէին և մեր կացութիւնը չէր փոխուէր:

Պայթումի վայրկեանին լատտին վրայէն ամէն բան ծովը թափած էր: մինակ կողմնացոյց մը, ժամացոյց մը և չոր միտի կտոր

մը կը մնային, մնացեալ բոլոր ուտելիքներն ու գործիները կորսուած էին:

Վիճակն իս սոսկալի էր, լապտերին տարտամ լոյսը մարելու վրայ էր: Տղու մը պէս վախցայ և մութը մնալու շտեմներու համար աչքերս գոցեցի: Կարծես արագութիւնը կը կրկնապատկուէր, կ'եռապատկուէր, ա'լ ջուրին վրայ չէինք սահել՝ վար կ'իյնայինք անդունդին հետ:

Յանկարծ ջուրի թաթառ մը, հեղուկ սիւն մը ողողեց մեզի: Եթէ Հանս ու հօրեղբայրս զիս չբռնէին՝ ծովուն մէջ կորսուած էի: Ա'լ չգիմացայ: զգայազիրի եղեր էի:

ԽՖ.

Կարծես գիշերուան ժամը չորսը կար, երբ ինքզինքս գտայ: առաջին զարմացած բանս եղաւ չորս կողմը տիրող լուսթիւնը: Հօրեղբորս ձայնը կարող եղայ լսելու:

— Լեքսէ՛լ, վեր կ'ելլենք կոր:

— Ի՞նչ բնել կ'ուզէք, գոչեցի:

— Այո՛, վեր կ'ելլենք կոր:

Ձեռքս դուրս երկնցուցի, պատին զարնուելով արիւնեցաւ:

Սոսկալի արագութեամբ մը վեր կը բարձրանայինք կոր:

— Եղածը հասկցայ յարեց հօրեղբայրս, ջուրը անդունդին մէջ լեցուելով՝ հիմայ իր բնական բարձրութեանը կ'ելլէ:

Հիմա քանի մը գրկաչափ նեղ հորի մը մէջ կը շարժինք, և եթէ չեմ սխալիր ժամը Յուլիէս մղոնէ աւելի տեղ կը բարձրանանք կոր: աստնկով բաւական վեր պիտի ելլենք:

— Այո՛, բայց կրնայ ըլլալ որ այս հորին բերանը գոցուած ըլլայ, և օդը երթալով ճնշուի, այն ատեն...:

— Աքսէ՛լ, ըսաւ հօրեղբայրս հանդարտ ձայնով մը, կացութիւնն իս բոլորովին յուսահատական է, բայց եթէ ամէն վայրկեան կրնայ ըլլալ որ կորսուենք, նոյնպէս ալ կորնայ ըլլալ որ ամէն մէկ վայրկեան ազատման ճամբայ մը բացուի մեր առջեւ, ուստի առիթէն օգուտ քաղենք:

— Ի՞նչ ընենք:

— Ուժերն իս տեղը բերելու համար լաւ ճաշ մը ընենք:

— Ի՞նչ կայ որ ուտենք:

Հօրեղբայրս չհասկցողի մը պէս երեսս կը նայէր:

— Ամէնը կտոր մը չոր միս ունինք ուտելու, ըսի:

— Լաւ, Աքսէլ, եթէ այդ կտորը պահենք, մինչեւ հաջորդ անգամ չպիտի մնանք միթէ:

— Այո՛, բայց եթէ հիմակ ուտենք, չէ՞ մի որ քանի մը ժամ վերջը միեւնոյն կացութեան մէջ պիտի իյնանք:

— Լաւ, ըսաւ հօրեղբայրս անհամբերութեամբ, նախամեծար կը սեպեմ հիմայ իսկ ուտել զայն, գէթ տակաւին քիչ ատեն բոլոր ոսկս վրաս պիտի ըլլայ:

— Աղէ՛կ, աղէ՛կ, ըսի, ճաշենք:

Անշուշտ ճաշ մը եղաւ այս վերջին կերակուրնիս. երեքս ալ առանց ախորժակի կերանք և շուտով մը լմնցուցինք մեր բաժինը. Անկէ հետքը ամէն մէկը իր խորհրդածութեան մէջ թաղուեցաւ. ի՞նչ կը խորհէր արդեօք Հանս, շիտակը կարելի չէ բան մը ըսել, Նս ոչ ներկային, ոչ ալ ապագային վրայ կը խորհէր, անցեալը կը գրաւէր ամբողջ միտքս: Մարթա, կրաւալէն՝ զոր այլ ևս չպիտի տեսնէի, Գէօնիկը թրասի տունը՝ երազի մը պէս՝ կ'անցնէին երեւակայութեանս առջեւէն, իսկ հօրեղբայրս՝ ձեռքը ջահ մը առած մեզ շրջապատող ժայռերը կը քննէր:

— Հրաբխային կրանիթ, կ'ըսէր, տակաւին միշտ նախնական շրջանին մէջ ենք, բայց շարունակ վեր կ'ելլենք կոր, ո՞վ գիտէ...:

Ո՞վ գիտէ... տակաւին կը յուսար:

— Հիմա, կը շարունակէր քիչ մը ետքը, ահա կ'ենյաւ... միքաշիսթ... յետոյ պիտի գայ փոխադրական հողերը և յետոյ...:

Ի՞նչ ըսել կ'ուզէր արդեօք: Տաքութիւնը երթալով աւելնալու վրայ էր. անանկ որ եղաւ վայրկեան մը ուր սափաւեցանք վերաբերուին ու բաճկոննիս հանել. ալ անտանելի կը դառնար:

— Արդեօք հրաշէկ կեդրոնի՞ մը կը մօտենանք հարցուցի:

— Անկարելի է, պատասխանեց հօրեղբայրս, կարելի բան չէ:

— Բայց պատերը սոսկալի կերպով տաք են:

Երբ այս կ'ըսէի, ձեռքս մեքենաբար ջուրին մէջ թաթխեցի և շուտով ետ քաշեցի:

— Զուրը կ'եղայ կոր, գոչեցի:


Հօրեղբայրս բարկութեան շարժումով մը միայն պատասխանեց: Այն ատեն ուղեղս չփոթեցաւ. Գաղափար մը, աստիճան ու անոյս, միտքս գրաւեց, քանի կ'ուզէի անոր վրայ չխորհիլ, այնքան աւելի իմացականութիւնս կը լեցնէր այն, ելեքտրական երեւոյթ մը պատրաստուելու վրայ էր. յետոյ այս սոսկալի տաքութիւնը, եռացեալ ջուրը... Ուզեցի անգամ մը կողմնացոյցը աչքէ անցնել:

Գործիքը խեցեցեք էր: Մագնիսացած ասեղը անկանոն կերպով մէկ բեւեռէն միւսը կը ցատքէր:

Թարգմ.

ԶԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐՅԱՆ

(Շարունակելի)



ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ



ՕԴԻ ԶՆՇԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեզի շրջապատող օդը ահագին ճնշու մը կ'ընէ երկրի երեսը գտնուող բոլոր մարմիններուն վրայ: Վերէն վար, վարէն վեր, քովընտի՝ ամէն կողմ զգալի կ'ընէ իր ծանրութիւնը:

Բնագիտութեան մէջ յատուկ գործիքներ կան՝ օդին այս յատկութիւններ ապացուցանելու համար, որոնցմէ մին է Մակտէպուրիի կիտագունտերը: Ամէնքդ ալ Բնագիտութեան դասերուն մէջ անշուշտ սորուած էք թէ ի՞նչ են այդ կիտագունտերը, բայց գուցէ բնաւ փորձը կատարած չէք անձամբ գործիքներ չունենալնուդ համար: Ահա՛ ձեզի դիւրին միջոց մը՝ առանց ծախքի այդ փորձը կատարելու համար:

Առէ՛ք երկու ջուրի գաւաթներ առանց յատակի, երկուքին ալ բերանը ճիշդ մի եւնոյն մեծութեամբ. պատկերին ցցուցածին պէս սեղանի մը վրայ երկու գաւաթները բերան բերնի դրէ՛ք մէջտեղը թրջած հաստ թուղթի թերթ մը դնելով: Այս թուղթը գաւաթներուն բերանները իրար կցելով պիտի արգիլէ սր դուրսի օդը ներս մտնել: Գաւաթները այս դիրքին մէջ՝ դնելէ առաջ տակի՝ սեղանին վրայ նստած գաւաթին մէջ

74252

2 4 4 0 2 0 1

5 4 3 2 1 0 9 8 7 6 5 4 3 2 1 0

३५७

949

8. 4. 8

செவ்வாய்க்கிழமை 19 செப்டெம்பர்

2 4 1 7 1 2

Второй раз

0.07104 0.07371 0.08084 0.08 0.08 0.08084 0.08371 0.07104

1871

1848

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և ԹԷ. օր ըստ օրէ հասնող Թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կ'ը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անդամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՅՏԵՍԻ, ԹԻԻ 38. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄՍՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպազրէ ամեն տեսակ գիրքեր, ման-

ագրքեր, հանդեսներ, օրչաբերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այցաբարդեր, եւ սպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական 2000է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմրցելի մաքրութիւն եւ ճշգրտագործութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գըրութեանց հետ զրկել Խմբագրութեանս, հակառակ պարագային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատ 40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ:

Կ. Պոլիս, Պապ ալի ճատէսի թիւ 38

درسعادته باب عالی جاده سنده نومرو ۸۴